

հերթով ներկայացնում է օտար նվաճողների կողմից ավերված հայրենի գեղեցկություններն ու արժեքները, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրն ընդգրկվում է մեկ նախադասության մեջ, որում պարագրկված է և՛ անցյալը, և՛ ներկան: Ինչպես՝ «Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդօրէիցն» (էջ 87):

Ողբի ժանրային դրսևորումներում կարևոր տեղ ունեն նաև աստվածաշնչյան տարաբնույթ հղումները: Հայ ժողովրդին բաժին հասած ողբերգությունները հայ պատմիչների մեծ մասին անպայման հիշեցնում են իսրայելացիների ճակատագիրը, և այդ տրամաբանության թելադրանքով՝ նրանց տեքստերում տարաբնույթ զուգադրումներով հայտնվում են աստվածաշնչյան հերոսներն ու համապատասխան դրվագները: Բացառություն չէ նաև Դավրիժեցու պատմագիրքը, ինչպես՝ «Աստանօր կարի հարկի պիտոյ եղև մերում ժողովրդեանն հին Մովսէս՝ և նորին աշակերտ Յեսու առ ի փրկել զնորս Իսրայէլ ի ձեռանէ երկրորդիս Փարաօսի» (էջ 80), և այլն: Աստվածաշնչյան նույն հերոսներին, ի դեպ, իր ողբում հիշատակում է նաև Խորենացին. «Վասն զի Մովսէս բարձեալ լինի, և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդեալ յերկիրն Աւետեաց»⁴⁷: Նույն կերպ՝ ողբի սեփական տեքստին ներծուվում են աստվածաշնչյան ողբասացների առանձին համեմատություններ, պատկերներ և այլն⁴⁸:

Դավրիժեցին ողբի սեփական կառույցներին զուգահեռ երբեմն պատկերում է իրական ողբի դրվագներ՝ ցույց տալով ողբասացության կերպը տեքստից ու պատումից դուրս, իրականության մեջ: Ահա թե ինչպես են Մեծ անապատի բնակիչները ողբում

⁴⁷ **Մովսէս Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 446, 448:

⁴⁸ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս մեր «Աստվածաշնչյան իմտերտեքստը Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության կառուցվածքում» հրապարակումը, «Գրականագիտական հանդես», Ա, 2006, էջ 101–106, ինչպես նաև սույն աշխատության «Աստվածաշնչյան իմտերտեքստը» ենթագլուխը: